ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԹԵՄԱ՝ ԿԱՐՈՏԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ Մ. ԳԱԼՇՈՅԱՆԻ ՎԻՊԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

Ուսուցիչ՝ Պողոսյան Լիլիթ

/

ԳՅՈՒՄՐԻ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

ԳԼՈՒԽ Ա

ԿԱՐՈՏԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ Մ. ԳԱԼՇՈՅԱՆԻ ՎԻՊԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ.--8

«ՁՈՐԻ ՄԻՐՈՆ», «ԿԱԾԱՆԻ ԾԱՄՓՈՐԴՆԵՐԸ»----------

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կան գրողներ, որոնց անունը տալիս անմիջապես պատկերացնում ես անկրկնելի մի աշխարհ, որը թեև հավերժորեն եղել է նրանցից առաջ և հավերժորեն գոյություն կունենա նրանցից հետ, բայց որն իր առանձնահատուկ գեղեցկություններով բոլորին հայտնի է նրանց անունով և նրանց շնորհիվ: Այսպիսի գրող է հայ գրականության ինքնատիպ ներկայացուցիչներից մեկը՝ Մ. Գալշոյանը, որը գրականություն մուտք գործեց՝ իր հետ բերելով լեռներում ապրող պարզ ու վեհ մարդկանց կենցաղի, վարքի ու բարքի, սիրո ու տառապանքի, հոգու գեղեցկությունների ու լուռ ողբերգությունների պատկերները: Ինչպես Լոռին՝ Թումանյանի, Գյումրին՝ Իսահակյանի, Կարսը՝ Չարենցի, Վանը՝ Մահարու, Զանգեզուրը՝ Բակունցի, այնպես էլ Գալշոյանի շնորհիվ հայ գականության մեջ հավերժական գրանցում ստացավ ի՛ր աշխարհը, ա՛յն աշխարհը, որը ձգտում էր փրկել մոռացումից՝ նրա վերջին մոհիկանների լուռ ցավն ու կարոտի կսկիծը պատկերագրելով:

Մ. Գալշոյանը գրականություն մտավ ոչ թե գրականությունից վերցրած սյուժեներով, բառ ու բանով, այլ իբրև իր նախնիների ու ժամանակակիցների կյանքի պատմությունները գրի առնող մի բանահավաք-արձակագիր, որը տարիներ շարունակ լսել էր հայոց դանթեականի ականատես ասացողներին: Իսկ նրանցից ամեն մեկի կյանքը մի որդիական էր՝ արժանի գրելու և վերապատմելու ուրիշներին: Նա իր գրական դաստիարակությունն ստացավ Արևմտյան Հայաստանի Սասունի գյուղերից գաղթած ծնողներից ու համագյուղացիներից և հավատարիմ մնաց այդ դաստիարակությանը:

Նա դարձավ պատմական հայրենիքը իրենց մեջ պահած գաղթականների սրենդի կյանքի տարեգիրը՝ դրանով իսկ շարունակելով հայ գրականության այն գիծը, որն իրենից առաջ բաց էին արել Ակսել Բակունցը, Հրաչյա Քոչարը, Խաչիկ Դաշտենցը: Շարունակեց շարունակվող այն սերնդի հետ, որի կանաչ ճյուղն էր ինքը, այն սերնդի, որն արդեն ավարտում էր իր կյանքի ուղին, շարունակեց արյան կանչով, շարունակեց, որպեսզի կորստից փրկի կորուսյալ աշխարհի վերջին

հիշատակները: Եվ եթե իրենից առաջ ոչինչ արված չլիներ, ապա նա ինքը կսկսեր, ինքը սկիզբ կդներ, որովհետև սկիզբը նրա համար ոչ թե գրական փաստն էր, այլ կյանքի փաստը, ոչ թե գրական կերպարն էր, այլ իրական մարդը, որն իր հայրն էր, իր պապն ու իր շրջապատի մարդիկ: Գյուղատնտեսի մասնագիտությամբ նա ևս իր մեծ նախորդի՝ Ակսել Բակունցի նման շրջել էր իր երկրի դաշտերով ու ձորերով, իր մեջ խտացրել հայրենի բնության որցաքարե ամրությունն ու դաշտային ծաղիկների մաքրությունը, տեր դարձել այդ ամենին և որդու արժանապատվությամբ ու պատասխանատվությամբ խոսել այդ դաշտերի ու սարերի անունից, այդ դաշտերում ու սարերում ամպրոդ մարդկանց անունից: Մ. Գալշոյանը ծնվեց իր ժողովրդի պատմությունից, պատմության ցավից, կորուստներից ու կարոտներից, ծնվեց հայրենի բնությունից և այդ պատմությունն ապրած ու բնության հավերժական տարերքին ձուլված մարդկանցից: Սա էր նրա գրական դպրոցը՝ թե՛ որպես գրական դասերի դպրոց և թե՛ որպես գրական կողմնորոշման դպրոց: Մ. Գալշոյանի ստեղծագործությունը, գեղավեստի փաստ լինելով ինքնին, նաև ազգագրություն է ու պատմագրություն, աշխարհագրություն ու ժամանակագրություն, բարք ու կենցաղ:

Թեմայի արդիականությունը - Մուշեղ Գալշոյանն իր ստեղծագործության մեջ հայրենիք է վերստեղծել, քարտեզագրել մի ամբողջ գյուղաշխարհ: Եվ դա մեր հայրենի եզերքն է, մեր կորուսյալ տան ճանապարհը, մեր անցյալ օրվա կյանքը: Ու հենց դրանով էլ նա այսօր ապրող սերունդների կողքին է և արդիական: Մերօրյա իրականության մեջ կարևոր է ներկայացնել կորուսյալ հայրենիքի վերհուշը գրականության մեջ մեկդարյա հեռավորությունից:

Մ. Գալշոյանի արձակը, շնորհիվ ժամանակների հետաքրքիր զուգորդման, առաջադրում է որքան անցյալի, նույնքան էլ մերօրյա խնդիրներ: Տեսած լինելով 20-րդ դարասկզբի արհավիրքները՝ նրա հերոսները համարյա մեր ժամանակակիցներն են՝ նոր իրականության օրերի հոգսերով: Ու եթե հաճախ առիթ է լինում հիշել անցյալը, վերահիմաստավորելու կատարվածը, ապա այդ վերադարձ-վերապրումների դրդիչներն անպայման ժամանակակից են:

Այդ իսկ պատճառով մենք ընտրեցինք այս թեման՝ ներկայացնելու արյան կանչով տոգորված գեղարվեստական արձակի ինքնատիպ էջերը և ուսումնասիրելու մեր մեծ գրողի գրական հետաքրքրությունների շրջանակը:

Հետազոտության նպատակը - Մեր հետազոտության նպատակն է վերլուծել Մ. Գալշոյանի՝ դժվարին, բայց հերոսական կյանքի ընդգրկումով, ինքնայրումից ծնված ազնիվ ու արդար էջերը, որոնք կոչված են ամրապնդելու հայրենիքի սրբազան սերը և ներքուստ ընդարձակելու ազգային կենսագրության քարտեզը:

Կարևոր է ուսումնասիրել Մ. Գալշոյանի հերոսների հոգեբանական դրաման, այն հերոսների, որոնք իրենց ճակատագրում, կենցաղում, մտածողության մեջ ունեն հինը, առասպելականը, բայց ապրում են նոր ժամանակներում: Եվ քանի որ նրանց անցյալն իսկապես շատ էր անօրինակ, իրական-հեքիաթային, ասքային-առասպելական, այդ պատճառով էլ նրանք ավելի շատ անցյալի մեջ են՝ այն ապրել-վերապրելով որպես ճակատագիր, հուշ, կենսափորձ, նաև իրենց մեջ շարունակվող կյանք:

Մեր ուսումնասիրության նպատակն է նաև անդրադառնալ անցյալը որպես սեփական ճակատագիր ապրելու հմտության հոգեբանական հենքին, որը չի սպառվում միայն գեղարվեստական համոզչության խնդրով: Այն հնարավոր է դարձնում մերօրյա հայացքով հայտնաբերել պատմության տրամաբանությունը, ժողովրդի ստեղծած արժեքները, գտածն ու կորցրածը:

Հետազոտության խնդիրը - Մուշեղ Գալշոյանի «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարի, «Զորի Միրոն» և «Կածանի ճամփորդները» վիպակների ուսումնասիրումը, արժևորումն ու քննաբանությունը:

Ուսումնասիրության փաստական նյութեր - Ուսումնասիրել ենք Մուշեղ Գալշոյանի ‹‹Մարութա սարի ամպերը››, ‹‹Զորի Միրոն›› և ‹‹Կածանի ճամփորդները›› ստեղծագործությունները, դրանց վերաբերյալ եղած քննադատական նյութերն ու հոդվածները:

Ուսումնասիրության մեթոդը - Թեման ուսումնասիրելիս կիրառել ենք վերլուծական, համադրական մեթոդները:

Աշխատանքի կառուցվածքը – Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, կցված է օգտագործված գրականության ցանկ։

ԳԼՈՒԽ Ա

ԿԱՐՈՏԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ Մ. ԳԱԼՇՈՅԱՆԻ ՎԻՊԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

Սեփական ճանապարհով ընթանալը քչերին է վերապահված, և այդ քչերից է Մուշեղ Գալշոյանը: Մ. Գալշոյանը գրականություն մուտք գործեց իր նյութով, ասելիքով և գեղագիտական դավանանքով: Նա գրականություն մտավ իրականությունից և հայ արձակի մեջ ստեղծեց ուրույն մի աշխարհ: Նա գրականություն մուտք գործեց իր հետ բերելով լեռներում ապրող պարզ ու վեհ մարդկանց կենցաղի, վարքի ու բարքի, սիրո ու տառապանքի, հոգու գեղեցկությունների ու լուռ ողբերգությունների պատկերները: Գալշոյանի շնորհիվ հայ գրականության մեջ հավերժական գրանցում ստացավ ի՛ր աշխարհը, ա՛յն աշխարհը, որը ձգտում էր փրկել մոռացումից՝ մարդկային լուռ ցավն ու կարոտի կսկսիծը պատկերագրելով:

Հայ գրականության երկար ուղին նախ ոգու ճանապարհ եղավ Գալշոյանի համար: Նա իր ստեղծագործական կյանքն ապրեց 1960-70-ական թթ.: Գրական տեսակետից ընդհանուր առմամբ աշխույժ տասնամյակներ էին, բայց նաև տարիներ, երբ ամեն մի արժեքավոր գործի համար անհրաժեշտ էր մաքառել, քանի որ սահմանափակված էին ստեղծագործական ազատության շրջանակներն ու ինքնադրսևորման հնարավորությունները: Հեշտ չէր լինելու Մ. Գալշոյանի համար: «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարի մի քանի գործ մերժել էին տպագրելու իր ջանքերով հիմնադրված «Գարուն» ամսագրում: Ամեն ինչ արվում էր պայքարի գնով և այդ պայքարի մեջ էր Գալշոյանը, այդ պայքարի մեջ էլ անցավ նրա կյանքը:

Երկրի հասարակական-քաղաքական կյանքում 20-րդ դարի 50-ական թվականների կեսերից սկսած վերափոխումները պարարտ հող ստեղծեցին հայ արձակի զարգացման համար: Գրականություն ներմուծվեց կյանքի նոր բնագավառներ, նոր թեմաներ ու խնդիրներ: Հայ գրողը հնարավորություն ստացավ

ավելի համարձակորեն անդրադառնալ ժողովրդի հեռու և մոտ անցյալին, ազգային ճակատագրի պատմական ակունքներին։

Ժամանակակից կյանքի, ժամանակակից խնդիրների և մարդկային հարաբերությունների գեղարվեստական բացահայտումը յուրաքանչյուր ազգային գրականության ու նրա զարգացման ամեն մի փուլի արժևորման հիմնական չափանիշն է։ Եվ մեր գրականությունը նման չեղավ ոչ մեկին։ Թեմատիկ առումով իրենց գեղարվեստական արտացոլումը ստացան թե' գյուղաշխարհի կյանքը, թե՛ հայ մտավորականության, թե՛ քաղաքային կյանքը։ Արդիականությունը գրողի համար գաղափարական-գեղագիտական խնդիր է, գրողի արդիական դիրքորոշումն է կյանքի երևույթների, կոնֆլիկտների նկատմամբ, մարդու և մարդկային հարաբերությունների ժամանակակից բացահայտումն է։ Արդիականության գեղարվեստական արտացոլման ինքնատիպ ոլորտ է գյուղաշխարհը։

Մուշեղ Գալշոյանը հիշվելու և մնալու էր հայ գրականության պատմության մեջ որպես Երկրի որդի։ Նա ամեն ինչ արեց, որ լքված մեր Հողը չորբանա։ Եկավ ու տեր կանգնեց մեզ ու մեր հողին։ Սա էր իր կոչումը, որն իրողություն դարձրեց նախ և առաջ իր գրականությամբ։ Գալշոյանը գերվեց ոչ թե բարձր գաղափարներով, այլ ստեղծեց բարձր գրականություն։ Նա նոր էջ բացեց հայ արձակի պատմության մեջ։ Իր ստեղծագործություններում Գալշոյանը այնպիսի կատարելության, ոճի զուլալ մաքրության հասավ, որը բնորոշ էր միայն իրեն ու իր գործերին։ Նա գրականություն բերեց իր հերոսին, բացեց մի աշխարհ, հարուստ ոգի ու այդ ամենը ձիրքի այնպիսի փայլով, որը հաստատում է նրա անկրկնելիությունը։

Մուշեղ Գալշոյանի ստեղծագործությունները ոչ թե կորցրած հայրենիքի պատկերներ են, այլ հավերժ հավատի։ Գյուղաշխարհն է իր տարերքը, գյուղի ու հողի մարդիկ են իր հերոսները։

Գալշոյանի արձակի հերոսներն են դառնում ժողովրդի հասարակ մարդիկ, որոնք հիմնականում պատկերվում են գյուղական կյանքին բնորոշ վիճակների մեջ։ Այդ հերոսները իրենց մեջ խտացնում են ժողովրդական կյանքն ու մտածողությունը։

Գալշոյանի մտորումներում ու ակնարկներում էջ առ էջ բացվում է հայոց աշխարհի իրական պատկերը։ Հայրենի բնաշխարհի մանրակրկիտ իմացությամբ իրական մարդկանց կերպարների ուրվագծումով, առանձին օջախների տոհմագրությունը և առանձին բնակավայրերի պատմությունը շարադրելով՝ Մուշեղ Գալշոյանը աստիճանաբար հանգեց գեղարվեստական ընդհանրացումների՝ ծնունդ տալով իր պատմվածքներին, վիպակներին և ավարտուն և անավարտ վեպերին։

Գալշոյանի կռիվը հանուն հիշողության էր, ընդդեմ մոռացության։ Ինչպես գեղարվեստական ստեղծագործություններում, այնպես էլ հոդվածներում Գալշոյանը հաճախ է խոսում կարոտի ու կորստի մասին, դրանք դարձնելով ոչ միայն զգայական, այլև իմաստային, անգամ փիլիսոփայական ելակետ իր ասելիքի ուղղվածության համար։

Մ. Գալշոյանն ամուր հենված էր նաև հայ գրական ավանդույթներին, որոնք գալիս էին բնաշխարհիկ արձակից, առաջին հերթին Հովհ. Թումանյանից, Հ. Մնձուրուց, Համաստեղից, Ա. Բակունցից, Գ. Մահարուց. Խ. Դաշտենցից։ «Դա այն ուղղվածությունն է, որ համապարփակ մի ընդգրկումով գեղագրում, գեղանկարչորեն լուսանկարում է հայրենի եզերքը, գեղարվեստական շունչ տալիս բնաշխարհիկ մարդուն, ամբողջ բնությանն ու կենդանական աշխարհին»(8,էջ311)։

Հետագայում այդ և այլ գրողների ստեղծագործությանը տրվեց կարոտի գրականություն բնորոշումը, որը ճշգրտորեն արտացոլում է գեղարվեստական հիմնական էությունը։ Կարոտ ծննդավայրի, անցյալ դարձող դեպքերի, դեմքերի ու հիշատակների հանդեպ։ Առավել չափով դա ընդգրկված է այն գրողների երկերում, որոնց ծննդավայրը մնաց իր տոհմիկ բնակչությունից բռնի դատարկված Արևմտյան Հայաստանում։ Մի տաք ու ջերմացնող շնչով Մնձուրին, Համաստեղը, Մահարին ոգեկոչեցին Արմտանը, Խարբերդն ու Վանը և կարծես գրականությամբ փորձեցին փրկել իրենց ծննդավայրը հավիտենական մոռացումից։

Ահա ավանդույթների այս շրջագծում, բայց ինքնուրույնաբար իր ստեղծագործական ուղին գծեց նաև Մ. Գալշոյանը։ Նրա ամբողջ գրականությունը հայրենի եզերքի կորուստի, այն ոգեկոչող կարոտի հոգեբանական շաղախ է

վիպական շնչի հետ միահյուսված նաև քնարական ջերմությամբ: Բայց Գալշոյանի հայեցակետը քիչ այլ էր, որովհետև այլ էին նրա հերոսները:

Դրանք ոչ թե ծննդավայրից հեռացած և կես ճանապարհին մնացած մարդկային ճակատագրեր էին այլ շարունակվող կենսագրություններ: Գալշոյանի հերոսների ծագումնաբանությունը սկսվում է իրենց բնաշխարհում, ընթանում նրանց ընդդիմությամբ ու պայքարով, ապա շարունակվում ստիպյալ հեռացումով նախնիների հողից և նոր տուն ու օջախի հիմնումով Հայաստանի մեկ այլ տարածքի վրա: Այդ տարածքը ևս նրանց հայրենիքն է, բայց ոչ ծննդավայրը: Այստեղ շարունակվում է նրանց հերոսական կենսագրությունը, քանի որ ամեն ինչ կորցնելուց հետո նրանք իրենց մեջ ուժ են գտնում վերստին նոր օջախ հիմնելու, շարունակելու բուժել անդարմանալի վերքերը: Բայց նաև կարոտի կանչը տանում է հեռու և սրբազան պաշտամունքի վերածում նախնիների նվիրական հողը: Ու այդ հողից սկիզբ առած առասպելը շարունակվում է: Հայոց աշխարհում շատ բան կփոխվի, բայց բոլորի հետ ու ամենքի մեջ կապրի ինքը՝ Երկրի որդին:

ԳԼՈՒԽ Բ

« ՁՈՐԻ ՄԻՐՈՆ», «ԿԱԾԱՆԻ ՃԱՄՓՈՐԴՆԵՐԸ »

Գալշոյանին հատկապես մեծ ճանանչում բերեց «Ձորի Միրոն» վիպակը: «Ավանգարդ» թերթում և «Գարուն» ամսագրում աշխատած տարիներին զուգընթաց գրվեց վիպակը: Վիպակի թեման ջարդից ու կոտորածից մազապուրծ եղած ձորի միրոնների մասին է, որոնք հիմնվեցին Արևելյան Հայաստանում, կերթեցին նոր կյանք, սակայն անցյալի դաժան հուշերը չլքեցին նրանց: Ձորի Միրոն փախստական է, ով կորցրել է իր ընտանիքը, հասել Թալին և տուն կառուցել, բայց նրա կառուցած տունը նայում է գյուղի հակառակ կողմը: Հերոսը, վերապրելով իր անցածը, արյունոտ կոտորածը, Էրգրի որբանալը, հարազատների սպանդը, նորից իր ընտանիքն է փորձում ստեղծել՝ ականջներում պահած Խութեցի հարսի ծիծաղն ու Էրգրում կորած Հարութ որդու անհետացած ճիչը:

Նա խռոված է աշխարհից այն բանի համար, որ կատարվեց իրենց հետ: Աշխարհը չուզեց պաշտպանել նրան, իսկ իրենք չկարողացան պաշտպանվել: Եվ արժանապատվություն ունեցող, նահապետական բարձր ավանդույթներով դաստիարակված մարդն այլևս չի ներում իրեն և ուրիշներին իրենց հետ պատահածի համար: Փախստականի կերպարի այսպիսի մեկնաբանությունը նորություն էր մեր արձակում: Գալշոյանի հերոսի մեջ անցյալը շարունակում էր մնալ և ծնել դառնագույն հարցեր :

Վիպակը զարգանում է հերոսի ներքին խոսքի աստիճանական ծավալմամբ: Ստեղծվում է բովանդակության երկու հուն՝ վերհուշի և դրանից բխող մտահանգումների: Բացվում են Ձորի Միրոի կյանքի փակագծերը, նա աշխարհում ունեցած իր երջանկությունը՝ մինուչար որդուն ճանապարհ է դնում բանակ՝ պատերազմ: Միրոյի միտքը թափառում է կորցրած ծննդավայրում և հուշ դարձած հարազատների պատկերների միջոցով վերակոչում պատմությունը: Ահա հուշերի մշուշի մեջ երևում է Հարութ պապը՝ բահը ուսին, ծաղկած ծիրանենուն հենված: Բայց եկել էր պահը, և Հարութ պապը պետք է մեկներ այս աշխարհից: Այսպես

կամաց կամաց Միրոյի աչքի առաջ բոլորը հեռանում են աշխարհից՝ մի հարս Խանդութ, մի կողմից Նարե, անուն առ անուն մի գերդաստան: Այսպես ամբողջ կյանքում ապրել է Զորի Միրոն՝ երազի մեջ պահած հեռու մի երկիր, մի կարոտ, որն իր տոհմի անցյալն է: Այդ անցյալն էլ անընդհատ նրա մեջ ոգեկոչում է հեռավոր պատկերներ: Եվ այդ անցյալով նրա ներկան ապրում է Հարութ որդու մեջ: Հարությունը ազգի հարության ու շարունակելիության խորհրդանիշն է, անցյալի հավերժական ձգտումը, որ ամենինչ կորցնելուց հետո, նրան ստիպում է ապրել: Հարութ որդին Հարութ պապի կենդանի հիշատակն է, ցեղ ու տոհմի շարունակությունը: Վիպակում Միրոն կորցնում է ռազմաճակատ մեկնած որդուն, յուրովի ողբում նրա մահը: Եվ այստեղ տեսնում ենք Գալշոյանին հատուկ տոկունություն, անկոտրում կամային հատկանիշներ, որոնք հեղինակը փոխանցում է հերոսին:

Գրողը վիպակին տալիս է վերանձնական, անմահության գաղափար,հայ ազգի մարմնացումը՝Միրոն,որ ընդհանրացված կերպար է ՝մեր ժողովրդի պատմական մեծ ողբերգության ապրածների խտացումը, և պատահական չէ, որ էլի ծնվում է Հարութ որդի: Կարմիր թելի պես վիպակում անցնում են հիշողությունները Արևմտյան Հայաստանի, հերոսի ընտանիքի, Միրոյի Հարութ պապի,կոտորածների ու սպանդի, ազգային ողբերգությունների մասին: Այդ հիշողությունների միջոցով գրողը կարծես քարտեզագրում է իր կուուսյալ հայրենիքը:Սարերի, քաղաքների, գետերի մասին նկարագրությունները այնքան իրական են, որ ասես ինքը՝ Գալշոյանն է ծնվել Արևմտյան Հայաստանում. «Ընկուզասարն էր ու՝ սարի դոշին մեր տուն...Մեր տուն քարափի պես էր...Մեր տան քարեր ՝Մարաթուկի Տիրամոր վանքի քարերի պես խոշոր, Տիրամոր վանքի քարերրի պես մամռոտ...Մեր տուն երեք պատ ուներ, չորրոդ՝ Ընկուզասարն էր... »(4, էջ 5) :

Ամբողջությանբ կարոտի երգ է վիպակը՝հայրենի լեռ ու քարի, իրիկնացի նստող մի մեծ գերդաստանի և անցած ճանապարհի վերհուշով: Կարոտը հեռավորի հանդեպ ինքնին հոգևոր ու զգացմունքայի է՝ ոգեկոչելու դեմքեր, անուններ, վայրեր

...Այդ կարոտը սիրո ծնունդ է։ Բայց և կա կարոտի մեջ թաքնված մեկ ուրիշ կարոտ, ցավի մի կանչ ։ Այդ կարոտը հայրենիքի ցավագին ու ողբերգական սերն է, որը մարմնավորում է բոլոր մնացած սերերը՝ որպես մաս, մասնիկ ու լրացում։ Այս զգայական-հոգեբանական վերաբերմունքն հայրենիքի հանդեպ Գալշոյանին դարձրեց կարոտի գրականության վառ ներկայացուցիչներից մեկը։

Գալշոյանը սերունդներին փոխանցում է ամենաթանկը նախնիներից ժառանգած ոգեղեն ուժը և հայրենի եզերքի իրական պատկերը։ Միրոյի որդուն՝ Հարութին, ռազմաճակատ ճանապարհելուն զուգահեռ արձակագիրը ներկայացնում է Միրոյի վերհուշը՝ծննդավայր Սասունը, հայրենի տունը, Սեպասարի հերոսական պաշտպանությունը։ Որդուն՝ Հարութին, ռազմաճակատ ճանապարհելիս հայրը մտովի ողբում է բոլոր նահատակների մահը, բայց և որդուն խրատում է.

«-Հարութ...Աշխարհք հող ու ջրից անուշ բան չկա։Մարդու ուժ հողի մեջ է։Քանի հող չեն խլե ոտաց տակեն, մարդ անպարտ է, թեկուզ զարկվի՝ անպարտ է, խլեցին՝ գերի է, գառ»(4, էջ 13) ։

Վիպակի գլխավոր հիշողությունն ավերի ու կոտորածի կողքին գաղթի ճանապարհն է.Միրոն գաղթի լուռ ու հավերժ վկան, իսկ կինը՝ Խութեցի հարսը, բորենիներից հոշոտված մատաղացու մի գառ։ Հուշերը պտտվում են ծերունու շուրջ, դառնում անցյալ ու կախվում, քարանում նրա քունքերում։ Այսպես դրվագ առ դրվագ անցյալից վերընձյուղվում է Միրոյի ներկան, որը նրա ու նրա տոհմի պատմության կենդանի դասն է՝ առաջին հերթին բարոյականության օրենքներով։ Գրողը պատկերում է անհավասար պայքարը հայ խախաղ, անզեն բնակչության և թուրքական կանոնավոր բանակի միջև։ Արձակագիրը ներշնչանքով է նկարագրել Սեպասարի կռիվը, ֆիդայիների անձնվեր հերոսանարտերը։ Ու կռիվն չարի ու բարու համար է, և Միրոն հույս ուներ, որ իր Հարութն է բնաջնջելու աշխարհի չարը, և Հարութը պետք է, որ շատ ապրի՝ իր նախնիների չապրած տարիներն ապրելու համար։

Վիպակում հսկայական ներուժ է ամփոփված, ակամա ընթերցողն էլ դառնում է ժամանակի հերոսներից մեկը, մտովի մասնակից լինում Սեպասարի

պաշտպանությանը, զոհվում և վերհառնում։ Գառշոյանը Հարութի և Միրոի երկխոսության միջոցով մեզ է փոխանցում հավերժության գաղափարը՝ վիպակի հանգուցալուծումը հասցնելով իր գագաթնակետին, դա անմահության, հողի, հայրենիքի գաղափարն է։

Կարծես կանխազգալով որդու կորուստը ու հետո ինքն իրեն սփոփելով Միրոն այնուհանդերձ հասկանում է, որ երկրի երեսին կա միայն մի կորուստ.

«Աշխարք ամենամեծ կորուստ մարդու կորուստ է։ Մարդու կորուստ անդարձ է։ Էրգրի ու հողի կորուստ ծանր կորուստ է, բայց հող անմահ է, հող ուրիշ տեր չի ընդունե, հող իր տիրոջ հետ արնակից է, ու իր արնակցին կսպասե՛, կսպասե՛, ու օրերից մի օր կհանդիպին : Հողի կորուստ անդարձ կորուստ չէ»(4, էջ 32)։

Կորստի ու կարոտի պատկերների հաջորդում են հաստատման օրերը, Խանդութի ու Նարեի հուշերը կենդանանում են Սառեի մեջ։ Ու հուշերը Միրոին տանում են հեռու, բացում կորստի անհատակ ողբերգություն և որպես հերթական մի խորհուրդ պահ տրվում պատերազմ մեկնող որդուն։Միրոն իր կենաց ծառի արմատները մխրճել է դարավոր անցյալի մեջ ու նրա կենսահյութն առնելով՝ ներկայի մեջ հյուսում է ապագան։ Բայց վիպակում Միրոն կորցնում է նաև ռազմաճակատ մեկնած Հարութ որդուն, յուրովի ողբում նրա մահը։ Եվ աշխարհից խռոված ապրում, աշխարհից խռովելը նշանակում էր չհաշտվել իր ճակատագրի հետ։ Այս անհաշտությունը դարձավ Գալշոյանի հերոսների ամենաբնորոշ գիծը։ Նրա ստեղծած կերպարները չեն համակերպվում մարդկային պայմանականությունների հետ, միշտ ձգտում են դեպի ակունքները, մարդկային անխաթար, բնական հարաբերությունները և միշտ մտածում են այն մասին թե ինչու չկարողացան պահել իրենց հայրենիքը, իրենց Սասունը։ Արևմտյան Հայաստանը զրկվեց իր տոհմիկ բնակչությունից։ Գաղթ ու եղեռն, դատարկված Արևմտյան Հայաստան, վերապրողների պատմություններ ու ճակատագիր և այդ ամենը հետապնդում էր մի նպատակ՝ ազգային ցավի հիշողություն, մայր հայրենիքի ու ծննդավայրի կարոտ, ազգային ոգու արթնացում ու ազգային արժանապատվության բարձրացում։

Գալշոյանի թողած ողջ գրական ժառանգության հիմքում ընկած են ջարդերի հետևանքով իրենց հայրենիքը կորցրած մարդկանց՝ ծերունիների առօրյա հույզերը, նրանց հիշողություններն ու երազանքները: Արձակագրի ողջ գրականությունը կարոտի ու ոգեկեչման, ազգային հիշողությունը վառ պահելու գրականություն է:

Մուշեղ Գալշոյանը՝ որպես գրող ու մարդկային տեսակ, գալիս է մեր պատմության խորքից, երկրի ընդերքից: Այդ իսկ պատճառով միանգամից քայլեց հայ գրականության ճանապարի նրեն վիճակված տարածությունը և այն կենդանացրեց իր ստեղծագործություններով: Նրա նպատակը գեղարվեստի լեզվով հայոց ոգու արթնացումն ստեղծելն է:

Մուշեղ Գալշոյանի գրականությունը հանգում է մի շատ կարևոր խորհրդի: Այն, որ հողը սիրում է արյուն և քրտինք: Արյուն, որ պահպանի հարազատությունը և քրտինք, որ կերակրի: Պահպանիր հողդ և մշակիր այն: Դարերից եկող և միշտ կենդանի պատգամ:

Գալշոյանը լավ պատմող էր, հետպատերազմյան հայ արձակի լավագույն պատմողներից մեկը: Սուր դիտողականությամբ, չափի նուրբ զգացումով, նա պատմում էր իր հերոսների մասին, առանց պաթոսի, առանց մանրամասն նկարագրությունների, բայց ստեղծում էր գունեղ, տեսանելի կերպարներ: Իր գեղարվեստական ստեղծագործություններում Գալշոյանը հաճախ է խոսում կարոտի մասին, դա դարձնելով ոչ միայն զգացական, այլև իմաստային, փիլիսոփայական ելակետ իր ասելիքի համար: Գալշոյանի հերոսները ներկայացնում են ժամանակակից իրականության դրամատիզմը, մարդկային հոգու ներքին հարստությունը: Ժամանակակից արձակում հերոսի այս տեսակն իր ուրույն տեղն ունի գրականության մեջ:

Իր հերոսների խոսք ու զրույցով գեղարվեստական խոսքի հարուստ ու կենսունակ պաշարներ է բերում հայի հոգեորդի գրողը. «Կորստի ու կարոտի մեջ տարուբերվող այս դառնալի զգացողություններն աստիճանաբար ուրվագծում են Գալշոյանի ստեղծագործական առանձնահատկություններից մեկը, ինչն, ըստ էության, մարդ-հայրենիք համաձույլ խորհրդանիշի հայտնաբերումն է»(8, էջ 311) :

Մարդը որպես հայրենիք՝ իր ճակատագրի մեջ խտացված ժողովրդի պատմությամբ ազգային նկարագիրն ամփոփող սովորույթներով ու բայրացկամությամբ: Մ.Գալշոյանի ստեղծագործելու տարիներին լայն թափ էր առնում հոգեվերլուծական, գոյափիլիսոփայական, առասպելաբանական արձակը: Բայց նա գնաց իր ճանապարհով, ինչը թելադրում էր իր նյութը և երբեք օտարաշունչ գեղարվեստական տարր չներմուծեց իր խոսքի մեջ: Գալշոյանը աբն գրողներից էր, որի թիկունքին ժողովուրդ ու բնաշխար կար՝ իրական մարդիկ, իրական կենսագրություններ, բերնեբերան անցնող պատմություններ: Այս առումով վարձատրված է այն ժողովուրդը, որն իր ձայնը տեղ հասցնող գրող ունի: Նաև սրանով է պայմանավորված կարճ ժամանակում Գալշոյանի ձեռք բերած ժողովրդականությունը: Մինչև «Մարութա սարի ամպերը» ժողովածուն, Գալշոյանը պատմվածքների մի շարք գրեց Կոմիտասի կյանքից և «Ծիրանի ծառ» խորագրով ի մի բերեց «Ծաղկած քարեր» գրքում: Դրանք առանձին դրվագներ են Կոմիտասի որբանոցային, ճեմարանական, ստեղծագործական կյանքից: Գեղարվեստական տեսակետից ուշագրավ է «Զորի Միրոն» գործը: Վիպակի թեման ջարդից ու կոտորածից մազապուրծ եղած հայերի մասին է, որոնք հիմնվեցին Արևելյան Հայաստանում, ստեղծեցին նոր կյանք, բայց չկարողացան մոռանալ անցյալը, անցյալի սպին ապրեց նրանց հետ մինչ մահ, կարոտի հուշերը մնացին թաց: Նույն թեման կա նաև «Կածանի ճամփորդները» վիպակում: Վիպակների հերոսներն պարզ են ու միամիտ, արդար ու ազնիվ, բռնկուն ու հերոսական: Հայրենիքի սիրո բարձր նվիրումն է նրանց կյանքի նպատակը, ապրելու միակ իմաստը, որ նրանք իրենց հոգում կրում են գիտակցական կյանքի սկզբից մինչև վերջ:

Գրողի նուրբ զգացական, բայց միևնույն ժամանակ խրոխտ գրիչը հետագայում կերտեց «Կածանի ճամփորդները» վիպակը՝ նվիրված կոտորածից մազապուրծ եղած այն ալևորներին, որոնք իրենց կենդանությամբ, վկայում են մեր ժողովրդի դառն անցյալը:

«Կածանի ճամփորդները» վիպակն անմիջական կապ ունի նախորդի հետ: Դեպքերի վայրը նույն լեռնային գյուղն է, հերուները՝ նույն գաղթականները,

Միրոյի սերնդակիցները։ Հեղինակը յուրաքանչյուր կերպարի ներկայացնում է թռուցիկ, բայց բնութագրական ուրվագծերով կերտում է նրանց հոգեբանորեն՝ նման, անհատապես՝ տարբեր։ Հետաքրքրական է գյուղի նահապետի՝ Նհոյի կերպարը։ Նա խորհրդանշում է անցյալն ու ներկան, կյանքն ու հավերժությունը։ Եվ այսպես շարունակ՝ հովիվ Ավգի, սայլապան Արո, Վարդե մարե և այս բոլորի մեջ Խնիկը՝ գյուղի երիդասարդ վարժապետի կերպարը։ Նրանցից ամեն մեկի կյանքը մի պատմություն է, մի ճակատագիր։ Այս հերոսները իրար լրացնելով կերտում են հայրենի բնաշխարհի մի մասը։ Նրանց ապրելու իմաստը մեկը մյուսին պահ տված կենսագրությունն է։ Եթե Միրոյի համար իր հիշատակը պահողը իր որդին էր, ապա այս հերոսների համար՝ նրանց կյանքի տարագիր-հեղինակը։ Հայ ժողովրդի հերոսական, ազատագրական պայքարի ու մաքառումների անմար հիշատակներով հարուստ պատմության մեջ 1915 թվականին գրվեց ամենամռայլ էջը. Օսմանյան Թուրքիան իրագործեց Արևմտահայության Մեծ եղեռնը, որին զոհ գնացին միլիոնավոր մարդիկ, իսկ հարյուր հազարավոր հայեր ցրվեցին աշխարհով մեկ։

Գալշոյանը հետևողականորեն ուրվագծում է հայրենի եզերքից արտաքցված հայրենակիցների մշտահոլով ցավի ու կարոտի արդյունքում ձևավորված սասունցու գոյակերպը։ Գալշոյանը զտարյուն սասունցի է և մշտապես ներկա է հերոսական լեռնաշխարհը վերագտնողների երթում։

Անցյալ դարձած ժամանակների վերհուշի, ապրած օրերի հաստատման, պայծառ կարոտի և անսկիզբ ու անվերջ մի տանջալի թախծի տվայտանքներով է գրված ամբողջ գիրքը։ Փոխվում են ժամանակները, փոխվում է կյանքը, բայց մարդիկ ապրելու հոգեբանական հենակետեր են որոնում և ապրում իրենց կորուստներով ու երազին պահ տալիս կորուստի հիշողությունը, ապրում անցյալի կարոտով և ապավինում հույսին ու սպասումին։ «Կածանի ճամփորդները » վիպակին բնորոշ են մի կողմից՝ իրական տարբեր վիճակների կտրուկ անցումները, դրանց համադրությունները, մյուս կողմից՝ ժամանակային տարբեր հատվածների հերթագայությունն ու միահյուսումը։ Նհո պապին, վարժապետ Խնիկին, Ավգիին Գալշոյանը ներկայացնում է ներկա որևէ վիճակում ու գործողության մեջ

միաժամանակ անցյալի վերհուշն է թևածում նրանց մտքում: Ժամանակային տարբեր փուլերում վիպակի հերոսներին ներկայացնելիս հեղինակը ընթացք է տալիս ներքին խուսքին: Ներքին խոսքի ընդգրկումները մեծ են. Դա անցյալի լուռ հիշողությունն է, որը մնում է մտքում և վիրավորանքի դեմ ուղղված պատասխանը, որ կուլ չի գնում: Վիպակի հերոսները անթաքույց կարոտով ու սիրով են հիշում հեռվում թողած իրենց հայրենի տունը: Հարյուր տարին բոլորած Նհո պապը շարունակում է ապրել այն հույսով,որ մի օր կտեսնի հայրենի հողը, իր պապերի էրգիրը: Վիպակի բոլոր հերոսները սովորական մարդիկ են և ճանաչում են միմյանց ոտքից գլուխ: Սկիզբը, ինչպես որ կա, այդպես էլ շարունակվում է մյուս հերոսների մեջ: Նոր ժամանակներ են, բայց գրքի հերոս դարձած սերնդի ներկայացուցիչներից յուրաքանչյուրի ուշքն ու միտքը անցյալի հետ է, ուր նրանց մանկության, պատանեկության և հերոսական դիմադրության տարիներն են: Այսպես ժամանակները տարալուծվում են հեղինակի մեջ, և նա էլ միանալով իր հերոսների կյանքին, գնում է նրանց անցյալ ու ներկա օրերին ընդառաջ:

Մուշեղ Գալշոյանը մահացավ 1980 թվականին, Կաթնաղբյուր գյուղում, հրացանի պատահական կրակոցից, հայրենի դաշտում: Այդ կրակոցը շատ նման էր այն կրակոցին, որից սպանվեց իր հերոսներից մեկը՝ հովիվ Առաքելը: Ինչպես Առաքելին, այնպես էլ Գալշոյանին հանգիստ չէր տալիս ֆիդայիների՝ իր այնքան սիրած ազատամարտիկների հիշատակը, և հրացանի այդ պատահական կրակոցների մեջ անպայման կյանքն ինքը խորհրդանշական իմաստ է դնում՝ ընդգծելով Գալշոյանի ու հերոսի հավատարմությունը, կապը ֆիդայական ավանդներին: Նա մի օր դուրս է գալիս որսի, նստում է հանգստանալու, զենքը դնում է գետնին և հանկարծ հիշում է, որ ֆիդայիները զենքը չեն դնում գետնին, ու նա զենքը ուզում է վերցնի, դնի ծնկներին և ձգանը դեմ է առնում քարին, ուժեղ քաշում փամփուշտը և մխրճում Գալշոյանի մարմինը:

Դաշտենցից հետո Գալշոյանը եղավ շարունակողը Սասնա տան հին ու նոր հեքիաթի՝ յուրաքանչյուր գրական գործում մատնացույց անելով ազգապահպանման, հայրենիքի գաղափարը: Այդ է վկայում մեծ բանաստեղծ Համո Սահյանի խոսքերը Գալշոյան-արձակագրի մասին. «Քարից բուսած տաղանդ էր

Մուշեղ Գալշոյանը։ Քարից բխած աղբյուր, և նրա ջուրն ուրիշ ջրեն է... Աշխարհի հետ կռիվ ուներ Մուշեղ Գալշոյանը։ Տիտղոսի և իշխանության կռիվ չէ այդ կռիվը, այլ կռիվ էր մարդ ծնվելու, մարդ ապրելու և մարդ մեռնելու համար...»(4,էջ311) ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարոտի երգ էր հյուսում Մուշեղ Գալշոյանը հեռվում մնացած հայրենի երկրի մասին։ Գրքի տասնինը պատմվածքները մեկ հերոսի պատմվածքներ են։ Մեկ հերոսի՝ թե՛ որպես տվյալ պատմվածքի հերոս, և թե որպես գրքի բոլոր պատմվածքների հերոս։ Նրանք այն նույն ծիծեռնակներն են, որ կառուցում են իրենցնոր տունն ու երկիրը՝ շարունակ հիշելով առաջվա տունն ու երկիրը։ Նրանք գրեթե միշտ տղամարդիկ են, տարիքն առած և ծերություն ապրող տղամարդիկ, որոնք այսօր կան, վաղը չկան։ Պատմվածքներից շատերը վերնագրված են հենց տվյալ հերոսների անուններով։

Գալշոյանի թողած ողջ գրական ժառանգության հիմքում Հայոց ցեղասպանության հետևանքով իրենց հայրենի եզերքը կորցրած մարդկանց՝ ծերունիների առօրյա հույզերը, նրանց հիշողությունները և անբիծ անուրջները։ Արձակագրի ողջ գրականությունը կարոտի ու ոգեկոչման, ազգային գրականությունը վառ պահելու գրականություն է։ Հետաքրքիր է, ինչպե՞ս կնայեր այսօրվա մեր իրականությանը Գալշոյանը։ Կարծում ենք, հպարտությամբ կխայտար նրա հոգին՝ տեսնելով ազատագրված Արցախն ու հայոց բանակի հաղթանակները, ևս մեկ անգամ մեզ կհիշեցներ՝ թե « հողի կորուստը անդարձ կորուստ չէ »։

Ուսումնասիրելով թեման՝ մենք հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Մ. Գալշոյանի արձակը, շնորհիվ ժամանակների հետաքրքիր զուգորդման, առաջադրում է որքան անցյալի, նույնքան էլ մերօրյա խնդիրներ։ Տեսած լինելով 20-րդ դարասկզբի արհավիրքները՝ նրա հերոսները համարյա մեր ժամանակակիցներն են՝ նոր իրականության օրերի հոգսերով։ Ու եթե հաճախ առիթ է լինում հիշել անցյալը, վերաիմաստավորել կատարվածը, ապա այդ վերադարձ-վերապրումների դրդիչներն անպայման ժամանակակից են։ Ճակատագրորեն վճռորոշ ողբերգականն ու հերոսականը գեղարվեստականացնելիս Մ. Գալշոյանը երբեք չի դիմում վերքի վրա աղ լցնելու կամ ազգային էժան սնապարծություն բորբոքելու

անընդունելի հնարանքներին: Նա ունի հստակ նպատակադրում. ճշմարտացիորեն արտացոլել պատմական ժամանակաշրջանի ոգին և վառ պահել ազգային հիշողությունը, արմատի զգացողությունը:

2. Ոգու վավերագրությունը նրա ստեղծագործության գլխավոր արժանիքներից մեկն է: Հաճախակի վերադարձն անցյալին Մ. Գալշոյանը երբեք չի վերածում ինքնանպատակ գեղարվեստական խաղի: Անցյալից մեզ հասած ժառանգության կտակառուն կարող ենք լինել միայն հիշողությունը վառ պահելով, դարերով կուտակված հոգևոր և նյութական արժեքներից, պատմական փորձից չկտրվելով: Գլխավորապես այս մտահոգությամբ է Մ. Գալշոյանն անդրադառնում պատմությանը:

3. Անցյալի մեջ բարոյական արժեքներ ու պատմական փաստի խորհուրդը հայտնաբերելու ձգտումը, ներկան նաև ժամանակների կուտակած ու ստուգած բարոյական չափանիշներով արժևորելը հեղինակի գեղարվեստական մտահղացման գլխավոր շարժառիթներից են: Եղեռնի անօրինակ արհավիրքն իր հրեշավոր հետևանքներով հայության համար դառնում է տնական ողբերգության սկիզբ:

4. Մարդկային կորուստների անսահմանության մեջ Մ. Գալշոյանն անանձնականի և անձնականի բաժանում չի կատարում, ավելի ճիշտ՝ կարողանում է դրանք արտացոլել այնպես միաձույլ, ինչպես կան իրականում: Անգամ շատ անձնական թվացող փաստը հարստացնում է այնպիսի իմաստով, որ վերածվում է անանձնականի, անձնական երջանկության պահանջի պաշտպանությունը՝ մարդկային երջանկության իրավունքի պաշտպանության: Մ. Գալշոյանը կարողացել է հերոսների ներաշխարհի արտացոլման զարմանալի խտացում կատարել: Մ. Գալշոյանի հերոսների կորուստներն այնքան շատ են, կյանքն այնքան դաժան է եղել նրանց նկատմամբ, որ նրանք երբեք չի կարող հաշտվել կատարվածի ու աշխարհի հետ: Որքան էլ երկար ապրեն, էլի պետք է իրենց խնդիրները չլուծած մարդու խռոված հոգով գնան աշխարհից:

Կորուստներից մեծագույնը թերևս կորցրածը վերագտնելու հույսի կորուստն է:

5. Մ. Գալշոյանը հայտնաբերում է մարդկային տառապանքի, իմաստնության, նաև գեղեցիկի նոր ու ինքնատիպ երանգներ: Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագրի արտացոլմամբ նա դառնում է ընդհանրապես մարդու ապրելու, երջանկության, հող ու ջրի իրավունքի պաշտպանը: Դրանով իսկ՝ պատերազմի, անարդարության թշնամին: Այսպես Մ. Գալշոյանն ազգայինից բարձրանում է մինչ համամարդկայինը:

6. Մ. Գալշոյանի հերոսը հոգու տառապագին գալարումների մեջ համոզվում է, որ կորուստները որքան մեծ, նույնքան էլ անդառնալի են: Նա մնում է միայնակ՝ ինքն իր ցավի հետ: Եվ այստեղ արդեն սեփական ցավին չդավաճանելը բարոյական, մարդկային էության խնդիր է դառնում: Ողբերգությունը ոչ թե ողբերգական վիճակի մեջ լինելն է, այլ դա գիտակցելը: Ուրեմն՝ 19-րդ դարի վերջերին սկսված ազգային ողբերգությունը դեռ շարունակվում է մարդկանց հոգիներում և ճակատագրերում: Ցավի ժառանգորդման ըմբռնումը սերունդների միջև կապի, հիշողությանն անդավաճան ապրելու մարդկային, ազգային-բարոյական անհրաժեշտության դրսևորման ձևերից մեկի հայտնաբերումն է: Տանջալի մտորումների մեջ Մ. Գալշոյանի հերսները հասկանում են, որ ազգային ողբերգությունը միշտ իրենց հետ է եղել, բայց մոռացել են նրա պատճառները փնտրել:

7. Մ. Գալշոյանի հերոսների ներկայությամբ ավելի է ընդգծվում իրենց ու մեր կորցրածը պատմության քառուղիներում: Ժողովածուի հերոսները մինչև վերջ ու լիարժեք են ապրում հույզը, զգացումը հոգեբանական իրադրությունը: Նրանց այդ անսովոր ուժը Մ. Գալշոյանը պատճառաբանում է հերոսների կենսափորձով ու ազգային էությամբ: Այսպես նաև ինքը՝ Մ. Գալշոյանը: Բայց արձակագիրը միամիտ չէ այնքան, որ, տրվելով իր անմիջական նախորդների բնօրրանի սիրուն, միայն իդեալական գույներով

ներկայացնի նրանց կյանքը: Թուրքահպատակ հայերի կյանքը երբեք էլ անհոգս ու անկարիք չի եղել: Նրանում հեքիաթայինը դրսևորվել է իբրև կորուստների ու տառապանքի անսահմանություն, իսկ առասպելականը՝ իբրև ազգային ոգու մաքառում:

8. Մ. Գալշոյանի հերոսի հայրենասիրությունը ժառանգված հատկանիշ է, ամենօրյա կեցություն: Արձակագիրը հրաշալիորեն գիտի ու պեղում է իր հերոսի և՛ պատմական-ազգային, և՛ սոցիալական ու մարդկային ծագումնաբանությունը:

9. Շնորհիվ Արևմտյան Հայաստանի իմացության և ստեղծագործական երևակայության՝ նա կարողանում է այնպիսի մանրամասնությամբ նկարագրել հերոսի շրջապատը, որ կարծես մեկ առ մեկ շրջել է այդ վայրերում, գրառել տեսածը: Հերոսի նկարագրի ամբողջականությունը լրացվում է կենցաղի, առօրյայի, սովորությունների արտացոլմամբ: Արձակագիրը հերոսի ազգային էության բացահայտման մեջ կարևոր տեղ է հատկացնում մարդ-կենդանի, մարդ-բնություն կապին՝ հայտնաբերելով նախասկզբնական-հեթանոսական, էպիկական բովանդակություն:

10. Մ. Գալշոյանի հերոսը պատի տակ նստած կամ ծնոտը ձեռնափայտին հենած պարապ փիլիսոփայող չէ հին ու նոր օրերի մասին: Նա փիլիսոփա է իր կենսակերպով, սկզբունքներով: Շարքի երկարակյաց հերոսը կարծես թե մարդկային իմաստնության, արդարության ու բարության հսկող հայացք է կյանքի, նրա փոփոխությունների վրա: Նա կյանքի հոսքից դուրս մնացած ծերունի չէ, իրեն զգում է օրերի մասնակիցն ու պատասխանատուն, պայքարում բարու և արդարի համար: Հաճախ դա ներքին պայքար է: Շատ դեպքերում մարդկայինն ու ազգայինը բացառող մեր ժամանակների մեջ մարդկայինն ու ազգայինն ամբողջացնող կերպար է՝ ինքնատիպ, կրքոտ և ներքնատես: Նա ոչինչ չի անում հենց այնպես, իմիջիայլոց, այլ միայն սրտի կամոք: Խորը, լիարժեք ու ինքնաբուխ են նրա զգացմունքը, տրամադրությունը: Հոգեբանական մակերեսայնությունը, շրջապատի

նկատմամբ անտարբերությունն անհարիր են նրա բնույթին: Նրան շատ բնորոշ է ներքին, հաճախ լարված դրամատիզմը:

11. Մ. Գալշոյանի ստեղծագործությունում բացակայում են Եղեռնի ուղղակի, դաժան իրողությունների նկարագրերը: Նա առաջին հերթին հուզական վերապրումի արվեստագետ է: Այդպես տպավորությունը հաճախ ավելի անմոռաց է դառնում: Մ. Գալշոյանի երկերն առանձնանում են հոգեբանական համոզչությամբ: Նրա հերոսի կյանքում ճակատագրորեն վճռորոշ պատահականը, տարօրինակը, խորհրդավորը սովորական վիճակ է ու հաճախակի հանդիպող իրողություն: Այդ ամենն իմաստավորելը, գաղափարական համոզչությամբ ներկայացնելը հնարավոր է միայն կայացած վարպետության և տաղանդի առկայությամբ:

12. Մ.Գալշոյանը քնարահոգեբանական արձակի հեղինակ է: Այստեղ թերևս հարկ է առանձնահատուկ նշել արձակագրի նախասիրած հնարանքներից մեկի՝ վերհուշի մասին: Որովհետև հերոսը սովորաբար այնպիսի հոգեվիճակում է լինում, որին բնորոշ է իր մեծ ցավի կամ ինչ-որ ճեղքվածք տված աշխարհի հետ մենակ մնալը: Հյուսվածքի քնարական նրբության ու բանաստեղծական հղկվածության առումով ևս նա բակունցյան ավանդների շարունակողն է: Մ. Գալշոյանը մշակեց իր արձակի լեզուն՝ մեծապես օգտվելով Սասնո բարբառի մտածողությունից, բառապաշարից, քերականական ձևերից: Դրանով նա հարստացրեց գեղարվեստական հայերենը: Նա եղավ արժանի ժառանգորդն ու զարգացնողը կորուսյալ եզերքը պատկերագրող մեր արձակի, որը հայտնի էր Ա. Բակունցի, Վ. Թոթովենցի, Գ. Մահարու, Խ. Դաշտենցի և այլոց ստեղծագործություններով:

Օգտագործված գրականության ցանկ

Ուսումնասիրություններ, բնագրեր

1. Աթաբեկյան Ս., Բառի կեցության խորհուրդը, Երևան, 1988, 276:
2. Ավետիսյան Զ., Նորագույն գրականության զարգացման միտումները, Երևան, 2003, 239:
3. Ափինյան Ա., Արդի գրականություն, Երևան, 2010, 317:
4. Գալշոյան Մ., Ընտրանի, Երևան, 2009, 292:
5. Գալշոյան Մ., Զորի Միրոն, Երևան, 1983,
6. Գալշոյան Մ., Մարութա սարի ամպերը, Երևան, 1981, 292:
7. Գասպարյան Դ., Ժամանակ և շարժում, Երևան, 1984, 293:
8. Գասպարյան Դ., Հայ գրականություն, գիրք 2-րդ, Երևան, 2002, 703:

Պարբերականներ

1. Գրական թերթ, 2006, 45:
2. Գրական թերթ, 2014, 4:
3. Հայոց լեզու և գրականություն, 2004, 1-2:
4. Հայոց լեզու և գրականություն, 2007, 7-8:
5. Հայոց լեզու և գրականություն, 2010, 6: